

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. Սույն հավելվածով կարգավորվում են ընտանիքի անապահովության գնահատման համար օգտագործվող բնութագրիչների, պայմանների, ընտանիքի անապահովության գնահատման բանաձևի, ընտանիքի անապահովության աստիճանի որոշման, ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում (այսուհետ՝ Գնահատման համակարգ) ներառվող տվյալների հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում է ընտանիքի անապահովության գնահատման համար անհրաժեշտ տվյալների կամ փաստաթղթերի ցանկը:

2. Ընտանիքի անապահովության գնահատման համար օգտագործվող բնութագրիչներն են՝

1) ընտանիքի կազմը.

2) ընտանիքի անդամի սոցիալական խումբը.

3) ընտանիքի անդամների փաստացի և հաշվարկային թիվը.

4) ընտանիքի եկամուտը.

5) ընտանիքի անդամին վերագրվող եկամուտը.

6) անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող գործոնների առկայությունը.

7) ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքը:

3. Ընտանիքի անապահովության աստիճանը որոշվում է Գնահատման համակարգում առկա տվյալների հիման վրա՝ ինքնաշխատ:

4. Ընտանիքի անապահովության աստիճանը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P = \left(\frac{\sum_{i=1}^k EVI_i + \sum_{i=1}^m HVI_i}{AEM} \right) \cdot \prod_{j=1}^n SF_j \cdot V$$

որտեղ P -ն ընտանիքի անապահովության աստիճանն է, $\sum_{i=1}^k EVI$ -ն ընտանիքի բոլոր տեսակի եկամուտների հանրագումարն է՝ մեկ ամսում, $\sum_{i=1}^m HVI$ -ն ընտանիքի բոլոր տեսակի վերագրված եկամուտների հանրագումարն է՝ մեկ ամսում, AEM -ը՝ ընտանիքի անդամների հաշվարկային թիվն է, $\prod_{j=1}^n SF_j$ -ը՝ բոլոր տեսակի անապահովության հիմքով սոցիալական աջակցությունը բացառող գործոնների արտադրյալն է, որտեղ յուրաքանչյուր բացառող գործոն ընդունում է երկու արժեք՝

$$SF = \{0, \text{ եթե առկա է բացառող տվյալ գործոնը կամ } 1, \text{ եթե առկա չէ տվյալ բացառող գործոնը}\}$$

իսկ V -ն ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքն է, որը նույնպես ընդունում է երկու արժեք՝

$$V = \{0, \text{ եթե ընտանիքն ապահով է կամ } 1, \text{ եթե ընտանիքն անապահով է}\}$$

5. Ընտանիքի անապահովության գնահատման բանաձևի օգնությամբ որոշվում է յուրաքանչյուր ընտանիքի անապահովության աստիճանը, որն արտահայտվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) դրամով և բնութագրում է ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը: Ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը համեմատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի (այսուհետ՝ սահմանային շեմ) արժեքի հետ: Եթե ընտանիքի անապահովության աստիճանը 0 է կամ բարձր է սահմանային շեմի արժեքի 185 տոկոսից, ապա նշանակում է ընտանիքն անապահով չէ:

6. Ընտանիքի անապահովության աստիճանը տարբերակվում է և չափվում է 4 շեմերի միջոցով, որով պայմանավորվում է տվյալ ընտանիքին հասանելի անապահովության հիմքով սոցիալական աջակցության փաթեթը՝

Անապահովության աստիճան	Ընդհանր, որի	Տրամադրվող ծառայություն
Ծայրահեղ անապահով	Մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը ցածր է սահմանային շեմի արժեքից	անապահովության նպաստ և օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ
Զափավոր անապահով	Մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հավասար է կամ բարձր է սահմանային շեմի արժեքից, սակայն չի գերազանցում սահմանային շեմի արժեքի 130 տոկոսը	եռամսյա հրատապ օգնություն (նաև՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք չունեցող այն ընտանիքի դեպքում, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը

		ցածր է սահմանային շեմի արժեքից) և օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ
Միջին անապահով	Մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հավասար է կամ բարձր է սահմանային շեմի արժեքի 130 տոկոսից, սակայն չի գերազանցում սահմանային շեմի արժեքի 160 տոկոսը	օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ
Անապահով	Մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հավասար է կամ բարձր է սահմանային շեմի արժեքի 160 տոկոսից, սակայն չի գերազանցում սահմանային շեմի արժեքի 185 տոկոսը	օրենսդրությամբ սահմանված այլ ծառայություններ

7. Ընտանիքի անապահովության աստիճանը հիմք է օրենսդրությամբ սահմանված սոցիալական ծառայությունների տրամադրման, մերժման կամ դադարեցման համար:

2. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԸՍՏ ԽՆԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ

8. Ընտանիքի խնամառության խումբը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$DRI_i = \frac{DR_i - DR_{min}}{DR_{max} - DR_{min}} \cdot 100 = \frac{DR_i - 0}{5 - 0} \cdot 100 = \frac{DR_i}{5} \cdot 100 = DR_i \cdot 20$$

1) որտեղ DR_i -ն՝ ընտանիքի խնամառության խումբն է, i -ն ընտանիքի հերթական համարը, DR_{min} -ը՝ << բոլոր ընտանիքների ամենափոքր խնամառության գործակիցը, DR_{max} -ը՝ << բոլոր ընտանիքների ամենամեծ խնամառության գործակիցը, իսկ DR_i -ին խնամառության գործակիցն է, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$DR_i = \frac{DEP_i}{WAA_i} = \frac{CH_i + DIS_i + ELD_i}{WAA_i}$$

2) որտեղ i -ն ընտանիքի հերթական համարն է, DR -ը՝ խնամառության գործակիցը, DEP -ը՝ ընտանիքում խնամառուների թվաքանակը, իսկ WAA -ն՝ ընտանիքում աշխատունակ անդամների քանակը, CH_i -ը՝ ընտանիքի մինչև 18 տարեկան անդամների, DIS_i -ը՝ 18-74 տարեկան 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակումներ ունեցող անձանց, ELD_i -ը՝ 75 և ավելի տարեկան անձանց քանակը:

9. Խնամառության գործակցի մեծագույն և փոքրագույն արժեքներն ստացվում են ՀՀ վիճակագրական կոմիտեի հետազոտություններից և արժեքները համապատասխանաբար կազմում են 5 և 0:

10. Ընտանիքները, ըստ խնամառության խմբի, խմբավորվում են հետևյալ խմբերի՝

Տիպ	Խնամառության համաթվի (DRI) մեծություն	Խոցելիության մակարդակի նկարագիր
1	DRI=0	նվազագույն խոցելիություն ունեցող ընտանիքներ
2	0 < DRI < 10	շատ ցածր խոցելիություն ունեցող ընտանիքներ
3	10 ≤ DRI < 20	ցածր խոցելիություն ունեցող ընտանիքներ
4	20 ≤ DRI < 50	միջին խոցելիություն ունեցող ընտանիքներ
5	50 ≤ DRI < 100	բարձր խոցելիություն ունեցող ընտանիքներ
6	DRI=100	առավելագույն խոցելիություն ունեցող ընտանիքներ

11. Ընտանիքը համարվում է առավելագույն խոցելիություն ունեցող նաև այն դեպքում, երբ ընտանիքը բաղկացած է միայն 63 և ավելի տարեկան անձանցից կամ 63 և ավելի տարեկան անձանցից ու խնամառուներից:

12. Ընտանիքի խնամառության խմբից կախված՝ ընտանիքին կարող է վճարվել հավելում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված չափով ու դեպքերում:

3. ԱՆԱՊԱՀՈՎ ՃԱՆԱԶՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԱՌՈՒՄԸ

13. Ընտանիքն անապահով ճանաչելու և անապահովության գնահատման հիմքով սոցիալական աջակցություն ստանալու համար իրեն անապահով համարող ընտանիքի չափահաս անդամներից մեկը (այսուհետ՝ Դիմող) Հայաստանի Հանրապետության սոցիալական պաշտպանության ոլորտի դիմումների միասնական համակարգում ստեղծում է «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված անհատական օգտահաշիվ՝ նույնականացվելով բնակչության պետական ռեգիստրի միջոցով:

14. Օգտահաշվի ստեղծման համար Դիմողն օգտագործում է ազգային նույնականացման հարթակում հասանելի եղանակներից որևէ մեկը կամ նույնականացվում է հանրային ծառայությունների համարանիշի (այսուհետ՝ ՀԾՀ) հիման վրա մուտքային տվյալներ ստանալու միջոցով:

15. Դիմողն անհատական օգտահաշվում առցանց եղանակով լրացնում է դիմումը, ներառյալ իր և ընտանիքի կազմում ներառված անձանց տվյալները, ներբեռնում է անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճենները, որի արդյունքում ձևավորվում է ընտանիքի՝ դիմում ներկայացնելու պահին 18 տարեկանը լրացած անձանց համաձայնության տեքստը՝ իր կողմից ընտանիքի անդամների մասին տվյալներ հայտարարագրելու, ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամների համար աշխատանք գտնելու նպատակով համապատասխան դիմում լրացնելու, ընտանիքի բոլոր անդամների մասին տվյալներն այլ տվյալների շտեմարաններից ստանալու և ստուգելու մասին՝ համաձայն սույն հավելվածի N 1 ձևի: Ընտանիքի անդամները նույնպես նույնականացվում են բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների միջոցով: Խնամակալը կարող է ներկայացնել դիմում՝ սույն հավելվածով սահմանված կարգով և համաձայն N 2 ձևի, եթե ընտանիքում այլ չափահաս ու գործունակ անձինք առկա չեն:

16. Անապահով ճանաչելու և անապահովության հիմքով սոցիալական աջակցություն տրամադրելու համար դիմող ընտանիքի անդամների համաձայնությունն ստանալու համար որպես ստորագրություն կիրառվում է ազգային նույնականացման հարթակի սահմանած եղանակներից որևէ մեկը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ Գնահատման համակարգում գեներացված համաձայնագիրն՝ ըստ ընտանիքի 18 տարեկանը լրացած անդամների ցուցակի, ստորագրում են ընտանիքի 18 տարեկանը լրացած անդամները, որը ներբեռնվում է Գնահատման համակարգ: Դիմումը համարվում է ընդունված սույն որոշմամբ սահմանված բոլոր տվյալները և փաստաթղթերը ներկայացնելու օրը: Դիմումի բնօրինակը ներկայացվում է Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխան տարածքային կենտրոն՝ այն ներբեռնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:

17. Ընտանիքի բոլոր անդամների (այդ թվում՝ մինչև 18 տարեկան անձանց) տվյալներն ստացվում են հարակից շտեմարաններից առցանց, ինքնաշխատ, իրական ժամանակի ռեժիմով կամ դիմողի կողմից ներկայացվում են թղթային տարբերակով (սույն հավելվածի 43-րդ կետով նախատեսված տեղեկանքները)՝ դրանց գունավոր լուսապատճենները ներբեռնելու միջոցով:

18. Դիմողի կողմից ներկայացված և առցանց ստացված բոլոր տվյալները ներառվում են դիմողի ընտանիքի էլեկտրոնային սոցիալական գործում (այսուհետ՝ Սոցիալական գործ)՝ համաձայն N 3 ձևի: Սոցիալական գործն ստեղծվում է միայն էլեկտրոնային տարբերակով:

19. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ կիրառվող բնութագրիչները ձևավորվում են դրանք հավաստող տվյալները ներառելու միջոցով:

20. Ընտանիքի անապահովության գնահատման համար դիմումի ներկայացումից հետո ընտանիքի անապահովության գնահատումն իրականացվում է յուրաքանչյուր ամիս՝ հաջորդող 12 ամիսների համար, եթե ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը ցածր է սահմանային շեմի արժեքի 160 տոկոսից, սույն հավելվածով սահմանված որևէ բացառող գործոն առկա չէ, իսկ տնայց կատարելու դեպքում, կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքը 1 է: Ընտանիքի անապահովության գնահատումն երկրորդ ամսվանից սկսած իրականացվում է յուրաքանչյուր ամսվա վերջին օրացուցային օրվա դրությամբ առկա տվյալների հիման վրա:

21. Ընտանիքի անապահովության գնահատումը մերժվում է, և ընտանիքին անապահով ճանաչելու համար պետք է ներկայացնել նոր դիմում՝ սույն հավելվածով սահմանված կարգով, եթե դիմումը, դիմումում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը չեն համապատասխանում սույն որոշմամբ սահմանված պահանջներին, հավաստի չեն կամ կեղծ են:

22. Ընտանիքի անապահովության գնահատումը դադարեցվում է և ընտանիքին անապահով ճանաչելու համար պետք է ներկայացնել նոր դիմում՝ սույն հավելվածով սահմանված կարգով, եթե՝

1) ընտանիքի անապահովության գնահատման համար դիմումը ներկայացնելու ամսվանից հետո անցել է 12 ամիս, կամ

2) ընտանիքի բնակության վայրի փոփոխության կամ ընտանիքում չափահաս անձանց թիվն ավելացել է (ներառյալ երեխայի չափահաս դառնալու հիմքով), կամ

3) ընտանիքի անապահովության գնահատման համար ներկայացված անհրաժեշտ տեղեկության փոփոխության մասին սահմանված ժամկետում չի տեղեկացվել, կամ

4) ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը գերազանցում է սահմանային շեմի արժեքի 160 տոկոսը կամ ընտանիքի անապահովության աստիճանը 0 է, կամ

5) ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են:

23. Ընտանիքի անապահովության գնահատումը դադարեցվում է ինքնաշխատ՝ սույն հավելվածի 22-րդ կետով նախատեսված հանգամանքի բացահայտման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

24. Ընտանիքի անապահովության գնահատման համար անհրաժեշտ տեղեկության փոփոխության դեպքում Դիմողը պարտավոր է մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա նախորդող օրը ներառյալ դրա մասին անհատական օգտահաշվի միջոցով կատարել անհրաժեշտ փոփոխություններ:

25. Ընտանիքի կազմը որոշվում է Դիմողի անհատական օգտահաշվում դիմումում լրացված տվյալների հիման վրա, որոնք ստուգվում են բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով:

26. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի կազմում չեն դիտարկվում հետևյալ անդամները՝ անկախ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու հանգամանքից՝

1) կալանավորված կամ հետախուզման մեջ գտնվող կամ քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձինք.

2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչված շարքային կազմի ժամկետային զինծառայողները.

3) ռազմաուսումնական հաստատություններում զորանոցային պայմաններում սովորող կուրսանտները.

4) բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում կամ համայնքային փոքր տանը կամ այլ հաստատություններում շուրջօրյա խնամք ստացող շահառուները.

5) Հայաստանի Հանրապետության տարածքից 90 և ավելի օր դուրս գտնվող անձը.

6) ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած, ինչպես նաև գերեվարված զինծառայողները և քաղաքացիական անձինք:

27. Եթե բնակչության պետական ռեգիստրում

1) ընտանիքի բոլոր չափահաս անդամները նշված հասցեում հաշվառված են ոստիկանի զեկուցագրի հիման վրա, և առկա են հաշվառված այլ անձինք, ապա Գնահատման համակարգի միջոցով առցանց հարցում է ուղարկվում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությանը (այսուհետ՝ ոստիկանություն)՝ ընտանիքի փաստացի կազմը հաստատելու կամ չհաստատելու համար.

2) ընտանիքի բոլոր չափահաս անդամները հաշվառված են նշված հասցեում և առկա չեն հաշվառված այլ անձինք, սակայն ընտանիքի անդամներից որևէ մեկի համար առկա է օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնություն, ապա առցանց հարցում է ուղարկվում ոստիկանությանը՝ ընտանիքի փաստացի կազմը հաստատելու կամ չհաստատելու համար.

3) ընտանիքի չափահաս անդամներից առնվազն մեկը հաշվառված է նշված հասցեում սեփականության իրավունքի կամ սեփականատիրոջ համաձայնության հիման վրա, և այդ հասցեում առկա են բնակչության պետական ռեգիստրում հաշվառված այլ անձինք, ապա անապահովության գնահատման դիմումը մերժվում է.

4) ընտանիքի չափահաս անդամներից որևէ մեկը հաշվառված չէ բնակչության պետական ռեգիստրում նշված հասցեում, սակայն ընտանիքի անդամներից որևէ մեկի ամուսինն է, ապա անապահովության գնահատման դիմումն ընդունվում է դիմումում նշված կազմով.

5) ընտանիքի անդամները հաշվառված են հանրության գերակա շահ ճանաչված և օտարման ենթակա բնակելի տարածությունում կամ պետական կամ համայնքային ծրագրով կամ աղետի հետևանքով քանդված շենքում կամ շինությունում, սակայն փաստացի բնակվում են այլ հասցեում, ապա առցանց հարցում է ուղարկվում ոստիկանությանը՝ ընտանիքի փաստացի կազմը հաստատելու կամ չհաստատելու համար.

6) առկա տվյալները համապատասխանում են դիմումով ներկայացված տվյալներին, ապա անապահովության գնահատման դիմումն ընդունվում է դիմումում նշված կազմով.

7) առկա տվյալների և ներկայացված տվյալների միջև առկա են այլ անհամապատասխանություններ, ապա անապահովության գնահատման դիմումը մերժվում է:

28. Ոստիկանությունը սույն հավելվածի 27-րդ կետում նշված հարցմանը պատասխանում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝

1) դիմումով նշված կազմը հաստատելու կամ հարցմանը սահմանված ժամկետում չպատասխանելու դեպքում անապահովության գնահատման դիմումն ընդունվում է դիմումում նշված կազմով.

2) դիմումով նշված կազմը չհաստատելու դեպքում հիմք է ընդունվում ոստիկանության տրամադրած տեղեկատվությունը, և անապահովության գնահատման դիմումը մերժվում է դիմումում ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու հիմքով:

29. Ընտանիքի անդամի համար կիրառվող սոցիալական խմբերն են՝

1) **խնամառու**՝ ընտանիքի մինչև 18 տարեկան կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակումներ ունեցող կամ 75 և ավելի տարեկան անձը.

2) **աշխատունակ**՝ 18 տարեկանից մինչև 62 տարեկանը՝ ներառյալ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր սահմանափակումներ չունեցող անձը.

3) 18 տարեկանից մինչև 22 տարեկանը ներառյալ առկա ուսուցմամբ սովորող անձը.

4) 30 և ավելի շաբաթական հղիություն ունեցող կինը.

5) մինչև 2 տարեկան երեխա խնամող անձը:

30. Ընտանիքի անդամների հաշվարկային թիվը ձևավորվում է սույն կետի 1-4-րդ կետերում նշված գործակիցների հիման վրա ստացված թվերը գումարելով՝

1) 18 և ավելի տարեկան անձի գործակիցը՝ 1.

2) 15-17 տարեկան անձի գործակիցը՝ 0. 7.

3) 10-14 տարեկան անձի գործակիցը՝ 0. 55.

4) 0-9 տարեկան անձի գործակիցը՝ 0. 45:

31. Ընտանիքի եկամուտը Գնահատման համակարգում հաշվի է առնվում դիմելու նախորդող ամսվա չափով և վերանայվում է յուրաքանչյուր ամիս, բացառությամբ սույն հավելվածի 32-րդ կետի 11-րդ ենթակետում նշված եկամուտների:

32. Ընտանիքի եկամտի կազմի մեջ ներառվում են՝

1) աշխատանքի վարձատրությանն ուղղված՝ հաշվարկված վճարման ենթակա միջոցները և դրանց հավասարեցված եկամուտները՝ օրենսդրությամբ սահմանված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ցանկի համաձայն՝ առանց հարկերի և օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարների.

2) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա հաշվարկված՝ վճարման ենթակա միջոցները՝ առանց հարկերի և օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարների.

3) կենսաթոշակը.

4) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստները, ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան կապակցությամբ վճարվող դրամական աջակցությունը.

5) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 70-րդ հոդվածով սահմանված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, առանձին

կատեգորիաների անձանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարները (այսուհետ՝ պարգևավճար)։

6) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն ստեղծված հատուցման հիմնադրամի շահառուներին տրամադրվող ամսական հատուցումը։

7) Հայաստանի Հանրապետության «Ժողովրդական» պատվավոր կոչման համար տրվող ամենամսյա պատվովճարը։

8) «Ծնողական փառքի» մեդալով պարգևատրված անձանց տրվող ամենամսյա պատվովճարը։

9) որպես սոցիալական աջակցություն, ամսական պարբերականությամբ (առնվազն երկու ամիս անընդմեջ) տրամադրվող դրամական միջոցները (դրամական օգնություն, աջակցություն, հատուցում)։

10) խնամատար ընտանիքներում երեխայի խնամքի և դաստիարակության դիմաց տրամադրվող վարձատրությունը և երեխայի խնամքի ու դաստիարակության համար տրամադրվող միջոցները։

11) անասնապահությունից և հողօգտագործումից ստացվող եկամուտը։

12) ընտանիքի չափահաս աշխատունակ, սակայն չաշխատող անդամի համար վերագրվող եկամուտը։

33. Սույն հավելվածի 32-րդ կետի 1-10-րդ ենթակետերով սահմանված եկամտի տեսակների մասին տվյալներն ստացվում են առցանց՝ իրական ժամանակի ռեժիմով։

34. Ընտանիքի՝ անասնապահությունից ստացվող եկամուտը հաշվարկվում է՝

1) ընտանիքին պատկանող անասնատեսակի և դրա քանակի մասին համայնքում անասնահամաճարակային միջոցառումներ իրականացնող անասնաբույժի կամ համայնքի անասնաբուժական ծառայություն իրականացնող անձի (այսուհետ՝ անասնաբույժ) կողմից տրամադրված տեղեկանքում՝ համաձայն սույն հավելվածի N 4 ձևի, առկա տվյալների հիման վրա։

2) ընտանիքին պատկանող անասնատեսակի և դրա քանակի մասին տեղեկանքում ներառվում, բայց Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման N 16 հավելվածով նախատեսված՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված համագործակցության հուշագրերի հիման

վրա կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերով ձեռք բերված կենդանիների մասին տվյալները չկիրառելով՝ տվյալ ընտանիքի կամ ընտանիքի անդամներից մեկի հետ կնքված պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածի համար:

3) մինչև չորս անդամներ ունեցող ընտանիքի անասնապահությունից ստացվող ամսական եկամուտը հաշվարկվում է տարեկան 150,000 ՀՀ դրամը գերազանցող գումարի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով, իսկ չորս և ավելի անդամներ ունեցող ընտանիքի անասնապահությունից ստացվող ամսական եկամուտը՝ ընտանիքի յուրաքանչյուր փաստացի անդամի համար հաշվարկված տարեկան 50,000 ՀՀ դրամը գերազանցող գումարի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով՝ համաձայն աղյուսակի:

Աղյուսակ

NN	Անասնատեսակը	Տարեկան եկամուտը (դրամ)
1.	Կով	102,500
2.	Այլ սեռահասակային խմբերի տավար	72,250
3.	Գոմշամատակ	141,000
4.	Խոզամայր (խոճկորներով)	80,000
5.	Այլ սեռահասակային խմբերի խոզեր	32,000
6.	Ոչխար, այծ	30,500
7.	Հավ	3,400
8.	Բադ, սագ	3,100
9.	Ջայլամ	120,000
10.	Հնդկահավ	6,650
11.	Մեղվաընտանիք	12,500
12.	Ճագար	1,500

35. Ընտանիքի՝ սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության հողից ստացվող եկամտի հաշվարկը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած՝ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական հողերի կադաստրային զուտ եկամտի չափերի հիման վրա՝

1) օգտագործելով մեկ հեկտար տվյալ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի համար կադաստրային տարեկան զուտ եկամտի չափի և ընտանիքի անդամներին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքի մակերեսի արտադրյալը, որից հանվում է հողի հարկի չափը.

2) հողօգտագործումից ստացվող եկամուտը հաշվարկվում է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված հաշվարկով ստացված տարեկան եկամտի մեկ տասներկուերորդի (1/12-ի) չափով՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին սեփականության կամ օգտագործման իրավունքով պատկանող հողամասի իր բաժնեմասին համամասնությամբ (ընդհանուր համատեղ սեփականության դեպքում համասեփականատերերի բաժնեմասերը դիտարկվում են հավասար չափերով).

3) օրենքով սահմանված կարգով հողի հարկից ազատված ընտանիքների համար հողօգտագործումից ստացվող եկամուտը չի հաշվարկվում՝ հողի հարկից ազատված լինելու ժամանակահատվածում:

36. Ընտանիքի եկամտի հաշվարկի մեջ չեն ներառվում ընտանիքի անապահովության գնահատման համար դիմում ներկայացնելուց հետո՝ ընտանիքի անապահովության գնահատման ընթացքում աշխատանքի ընդունվելու արդյունքում ստացված բոլոր եկամուտները՝ աշխատանքի ընդունման ամսվան հաջորդող 12 ամիսների համար: Սույն կետը նույն անձի համար կրկին կարող է կիրառվել նախորդիվ կիրառման ամսվանից առնվազն քսանչորս ամիս անց:

37. Ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամներին եկամտի վերագրման կանոններն են.

1) եկամտի վերագրում չի կատարվում, եթե ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամը 18 տարեկանից մինչև 22 տարեկանը ներառյալ առկա ուսուցմամբ սովորող է կամ 30 և ավելի շաբաթական հողի կին կամ մինչև 2 տարեկան երեխա խնամող անձ է, ինչպես նաև եթե ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամը ընդգրկված է զբաղվածության պետական ծրագրերում՝ ծրագրի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում.

2) եթե ընտանիքը բաղկացած է միայն աշխատունակ չաշխատող անդամներից կամ եթե ընտանիքում խնամառուները միայն 14 տարեկանից մինչև 17 տարեկանը ներառյալ հաշմանդամություն չունեցող երեխաներ են, ապա եկամտի վերագրում կատարվում է ընտանիքի երկրորդ աշխատունակ, բայց չաշխատող անդամից սկսած՝ աշխատունակ, բայց չաշխատող մնացած անդամներին՝ անապահովության գնահատման ամսից, իսկ ընտանիքի առաջին

աշխատունակ, բայց չաշխատող անդամին եկամուտ վերագրվում է անապահովության գնահատման համար դիմում ներկայացնելուն ամսվան հաջորդող վեցերորդ ամսվանից, եթե մինչ այդ աշխատանք ձեռք չի բերել կամ զբաղվածության ծրագրերի կամ միջոցառումների շահառու չի դարձել: Ընտանիքի առաջին աշխատունակ, բայց չաշխատող անդամին ընտրում է Դիմողը:

3) եթե ընտանիքում առկա է սույն կետի 1-ին ենթակետով նշված որևէ անդամ, ապա եկամտի վերագրում կատարվում է ընտանիքի առաջին աշխատունակ, բայց չաշխատող անդամից սկսած՝ աշխատունակ, բայց չաշխատող մնացած անդամներին՝ անապահովության գնահատման ամսից:

4) եթե ընտանիքում 14 տարեկանից մինչև 17 տարեկանը ներառյալ հաշմանդամություն չունեցող երեխաներից բացի, կան այլ խնամառուներ և չկան սույն կետի 1-ին ենթակետով նշված անդամներ, ապա եկամտի վերագրում կատարվում է ընտանիքի երկրորդ աշխատունակ, բայց չաշխատող անդամից սկսած՝ աշխատունակ, բայց չաշխատող մնացած անդամներին՝ անապահովության գնահատման ամսից: Ընտանիքի առաջին աշխատունակ, բայց չաշխատող անդամին, ում եկամտի վերագրում չի կատարվում, ընտրում է Դիմողը:

5) եկամտի վերագրում կատարվում է ընտանիքի 65 և բարձր տարիքին անձի, ով չի աշխատում և օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում չի ստանում կենսաթոշակ կամ ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ՝ անապահովության գնահատման ամսից:

6) եթե անապահովության գնահատումը դադարեցվել է սույն կետով նախատեսված վերագրման արդյունքում, ապա անապահովության գնահատման դադարեցման ամսվանից հետո 2 տարվա ընթացքում անապահովության գնահատման դիմում ներկայացնելու դեպքում՝ վերագրումը շարունակվում է իրականացվել անապահովության գնահատման դադարեցման պահին ընտանիքի անդամի համար վերագրված եկամտի չափով, եթե առկա չեն սույն կետով սահմանված եկամտի վերագրման բացառությունները:

38. Վերագրվող եկամտի չափը որոշվում է սահմանային շեմի արժեքի չափով: Եկամտի վերագրումից հետո վեց ամսվա ընթացքում աշխատանք ձեռք չբերելու կամ զբաղվածության ծրագրերի կամ միջոցառումների շահառու չդառնալու դեպքում հաջորդող ամիսների ընթացքում ընտանիքի 18 տարեկանից մինչև 54 տարեկանը ներառյալ աշխատունակ, բայց չաշխատող անդամների համար իրականացվում է վերագրված եկամտի չափի բարձրացում՝ ամսական 10.000 ՀՀ դրամի չափով, բայց ոչ ավելի, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափը:

39. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ օգտագործվում են անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող հետևյալ գործոնները (այսուհետ՝ բացառող գործոն)՝

1) 2015 թվականից հետո արտադրված ավտոտրանսպորտային միջոցի (<<-ում հաշվառված և համարանիշ ունեցող) առկայությունը կամ եթե ավտոտրանսպորտային միջոցի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 12000 ՀՀ դրամը.

2) անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողից) առկայությունը, եթե՝
ա. մարզային բնակավայրերում առկա անշարժ գույքի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 4200 ՀՀ դրամը.

բ. Երևան քաղաքում առկա անշարժ գույքի գույքահարկի (մեկից ավելի գույքի առկայության դեպքում՝ հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 12000 ՀՀ դրամը.

գ միաժամանակ մարզային բնակավայրերում և Երևան քաղաքում առկա անշարժ գույքերի գույքահարկի (հանրագումարային) տարեկան չափը գերազանցում է 12000 ՀՀ դրամը.

3) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հանգամանքը, մասնավորապես, եթե ընտանիքի անդամը հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, ում վարձու աշխատողներից առնվազն մեկը չի հանդիսանում ընտանիքի անդամ կամ ընտանիքի որևէ անդամի ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված որևէ առևտրային կազմակերպության հիմնադիր, իսկ սահմանափակ պատասխանատվության, բաց բաժնետիրական, փակ բաժնետիրական ընկերությունների դեպքում՝ նաև մասնակից կամ բաժնետեր լինելու հանգամանքը.

4) ապրանքների ներմուծման կամ արտահանման համար մաքսային վճարը՝ նախորդող ամսվա ընթացքում ընտանիքի մեկ հաշվարկային անդամի հաշվով սահմանային շեմի արժեքը գերազանցելու հանգամանքը.

5) տվյալ տարվա ամառային ամիսների ընթացքում ընտանիքի կողմից էլեկտրաէներգիայի սպառման սահմանաչափը գերազանցելու հանգամանքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$w = 90 \text{ կՎտ.ժամ} + 20 \text{ կՎտ. ժամ} \times n, \text{ որտեղ } n\text{-ն ընտանիքի փաստացի անդամների թիվն է.}$$

6) նախորդող 12 ամիսների ընթացքում ընտանիքի կողմից բնական գազի սպառման միջին ամսական սահմանաչափը գերազանցելու հանգամանքը, որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$w = 600$ խոր. մ. + 110 խոր. մ. $\times n$, որտեղ n -ն ընտանիքի փաստացի անդամների թիվն է.

7) վարկային պարտավորությունների գծով ամսական մարման չափն ընտանիքի մեկ հաշվարկային անդամի հաշվով սահմանային շեմի արժեքը գերազանցելու հանգամանքը.

8) ընտանիքի բոլոր անդամների կողմից << հարկային օրենսգրքով սահմանված եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) համաձայն՝ նախորդ տարվա համար հայտարարագրած բոլոր եկամուտների $1/12$ -ը՝ ընտանիքի մեկ հաշվարկային անդամի հաշվով սահմանային շեմի արժեքի եռապատիկը գերազանցելու հանգամանքը:

40. Սույն հավելվածի 39-րդ կետի 1-2-րդ ենթակետերում նշված գույքահարկի տարեկան չափը հաշվարկվում է ընտանիքի յուրաքանչյուր անդամին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի իր բաժնեմասին համապատասխան (գույքահարկը բաժանվում է սեփականատերերի թվի վրա և հաշվարկի համար հիմք է ընդունվում դիմող ընտանիքի անդամի սեփականության իրավունքի բաժնեմասին համապատասխանող չափը):

41. Ընտանիքի անապահովության գնահատման ժամանակ ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրությունն իրականացվում է տնայցերի միջոցով, որը կարող է ունենալ 0 կամ 1 արժեք՝ համաձայն սույն հավելվածի N 5 ձևի: Ընտանիքի կեցության պայմանները ձեռք են բերում 0 արժեք՝ ուսումնասիրության արդյունքում բարեկեցության 0.7 միավորից բարձր միավոր ունենալու դեպքում:

42. Ընտանիքի անապահովության գնահատման դիմում ներկայացնելուց հետո ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրություն իրականացվում է, եթե ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը ցածր է սահմանային շեմի արժեքի 130 տոկոսից և առկա չէ սույն հավելվածով սահմանված որևէ բացառող գործոն:

43. Անապահով ճանաչելու և անապահովության հիմքով սոցիալական աջակցություն տրամադրելու դիմումին կցվում են սույն կետով նախատեսված փաստաթղթերն այնքան ժամանակ, քանի դեռ այդ տվյալները թվայնացված չեն և առցանց ստանալու հնարավորությունը չի ստեղծվել: Մասնավորապես՝

1) ընտանիքին պատկանող անասնատեսակի և դրանց քանակի մասին տեղեկանքի գունավոր լուսապատճենը: Տեղեկանքը գործում է տրման պահից 12 ամսվա ընթացքում.

2) համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի տեղեկանքի գունավոր լուսապատճենը՝ պետական, համայնքային ծրագրով կամ աղետի հետևանքով քանդված շենքի կամ շինության մասին: Տեղեկանքում պետք է ներառվի Դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը

հաստատող փաստաթղթի համարը, ՀԾՀ կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, ՀՀ կառավարության կամ համապատասխան համայնքի ավագանու այն որոշման համարը, ընդունման օրը, ամիսը, տարեթիվը, որով սահմանվում է պետական կամ համայնքային ծրագրով կամ աղետի հետևանքով քանդված շենքերի կամ շինությունների հասցեները, որոնցում տվյալ ընտանիքը հաշվառված է եղել մինչ այդ իրավական ակտի ընդունումը, տրամադրվող հատուցման չափը և ժամկետը, այդպիսին լինելու դեպքում, տեղեկանքի տրման օրը, ամիսը, տարեթիվը և տեղեկանքը ստորագրողի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը: Տեղեկանքը գործում է տրամադրման պահից 12 ամիս, բայց ոչ ավելի, քան մինչև նոր բնակարանի հատկացումը.

3) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելու մասին զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունից տրված տեղեկանքի գունավոր լուսապատճենը: Տեղեկանքում պետք է ներառվի զորակոչվածի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալը (զինգրքույկի համարը), ՀԾՀ-ը կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, զինվորական ծառայության անցնելու օրը, ամիսը, տարին, տեղեկանքի տրման օրը, ամիսը, տարեթիվը և տեղեկանքը ստորագրողի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը: Տեղեկանքն ուժի մեջ է զինվորական ծառայության անցնելու օրվա ամսվանից 24 ամիս, բայց ոչ ավելի քան օրենսդրությամբ սահմանված դեպքերում ավելի շուտ զորացրվելը (վիրավորում, հիվանդություն, զոհվել և այլն).

4) նախնական, միջին մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում առկա ուսուցմամբ սովորելու մասին համապատասխան հաստատությունից տրված տեղեկանքի գունավոր լուսապատճենը: Տեղեկանքում պետք է ներառվի ուսանողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալը, ՀԾՀ-ը կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, ուսումնական հաստատության անվանումը, ուսումնառության բաժինը (հնարավոր մասնագիտացումը), ուսումնական տարին, տեղեկանքի տրման օրը, ամիսը, տարեթիվը և տեղեկանքը ստորագրողի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը: Տեղեկանքն ուժի մեջ է տրման պահից մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը, բայց ոչ ավելի քան օրենսդրությամբ սահմանված դեպքերում ուսումնառության ընդհատումը.

5) մինչև 2014 թվականը գրանցված ամուսնության կամ ամուսնալուծության վկայականի կամ օտարերկրյա պետությունում գրանցված ամուսնության կամ ամուսնալուծության վկայականի գունավոր լուսապատճենը (օտարերկրյա պետության կողմից տրամադրված փաստաթուղթը

պետք է թարգմանված լինի հայերեն՝ նոտարական վավերացմամբ, իսկ սահմանված դեպքերում՝ նաև ապոստիլով հաստատված), եթե նշված տվյալը դեռևս չի թվայնացվել:

6) ուժային կառույցների (<< պաշտպանության նախարարության, << ազգային անվտանգության ծառայության, << ներքին գործերի նախարարության և այլն) ծառայողների աշխատավարձերի մասին համապատասխան մարմնի կողմից տրամադրված տեղեկանքի գունավոր լուսապատճենը, եթե աշխատավարձի մասին տվյալները գաղտնի են: Տեղեկանքում պետք է ներառվի աշխատողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալը, ՀԾՀ-ը կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանքի համարը, տեղեկանքի տրման ամսվան նախորդած ամսվա հաշվարկված վճարման ենթակա աշխատավարձի չափը՝ առանց հարկերի և օրենսդրությամբ սահմանված պարտադիր վճարների, տեղեկանքի տրման օրը, ամիսը, տարեթիվը և տեղեկանքը ստորագրողի պաշտոնը, անունը, ազգանունը և ստորագրությունը: Տեղեկանքը գործում է տրամադրման պահից 12 ամիս:

7) անձի նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու մասին որոշման գունավոր լուսապատճենը: Խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու մասին որոշումը գործում է մինչև դրա փոփոխումը կամ դադարեցումը:

44. Դիմողի կողմից անհատական օգտահաշվում դիմումը, պահանջվող տվյալները և ներբեռնված փաստաթղթերը ներկայացնելուց հետո դիմումը հասանելի է դառնում Ծառայության տարածքային կենտրոնի համապատասխան մասնագետին (այսուհետ՝ Մասնագետ), ով ընտրվում է ինքնաշխատ եղանակով՝ պատահականության սկզբունքով: Մասնագետը չի կարող հանդիսանալ Ծառայության այն տարածքային կենտրոնի աշխատողը, որի սպասարկման տարածքում բնակվում է Դիմողը:

45. Դիմումն ընդունվելուց հետո այն հասանելի է դառնում Դիմողի բնակության հասցեն սպասարկող Ծառայության տարածքային կենտրոնի ընտանիքի կեցության պայմանները գնահատող մասնագետին (այսուհետ՝ Գնահատող մասնագետ), որը 15 աշխատանքային օրվա ընթացքում կատարում է տնայց՝ սույն որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով: Եթե նշված ժամկետում տնայց չի կատարվում Դիմողի կամ ընտանիքի անդամների գործողության կամ անգործության պատճառով, ապա ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքները ձեռք են բերում 0 արժեք:

46. Գնահատող մասնագետը տնայցի ընթացքում սույն հավելվածի N 5 ձևով սահմանված հարցաշարով իրականացնում է դիմողի ընտանիքի կեցության պայմանների

ուսումնասիրություն՝ դիտարկման և հարցազրույցի մեթոդներով, տվյալները և կատարած լուսանկարները մուտքագրում Գնահատման համակարգ, որոնց արդյունքում Գնահատման համակարգում ինքնաշխատ եղանակով ձևավորվում է դիմողի ընտանիքի կեցության պայմանների ուսումնասիրության արդյունքը:

47. Ընտանիքի անապահովության գնահատման դիմումն ընդունվելուց հետո անապահովության հիմքով սոցիալական աջակցության իրավունք ունենալու, անապահովության մերժման կամ դադարեցման դեպքում Դիմողը ստանում է ծանուցում:

48. Գնահատման համակարգում ինքնաշխատ եղանակով ընդունված բոլոր որոշումները և ծանուցումները հասանելի են Դիմողին՝ իր անհատական օգտահաշվում: Դիմողը դրանց մասին կարող է ստանալ նաև ծանուցում՝ իր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու կամ Ծառայության տարածքային կենտրոնում առձեռն տրամադրելու միջոցով՝ նման առցանց պահանջ ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

49. Գնահատման համակարգում ինքնաշխատ եղանակով ընդունված որոշումները դիմողը կարող է առցանց բողոքարկել վերադասության կարգով՝ անհատական օգտահաշվի միջոցով կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

50. Սույն հավելվածի 49-րդ կետով նախատեսված բողոքի արդյունքում ինքնաշխատ եղանակով կայացվում է որոշում: Ընդ որում, բացառող գործոնների վերաբերյալ բողոքի առկայության դեպքում Դիմողն էլեկտրոնային հաղորդագրության միջոցով ուղղորդվում է համապատասխան մարմիններ (կազմակերպություններ)՝ տվյալների ճշգրտման նպատակով, իսկ մնացած պայմանների հիմքով բողոքարկման դեպքում՝ Ծառայության համապատասխան ստորաբաժանումը կազմակերպում է անհրաժեշտ գործողությունների իրականացումը (տնայցի իրականացում, փաստաթղթերի և տվյալների համադրում և այլն): Ծառայության որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

51. Գնահատման համակարգում ներառվում են ընտանիքի անապահովության գնահատման համար դիմած ընտանիքների և նրանց անդամների տվյալները:

52. Գնահատման համակարգի մուտքի թույլտվություն ունի անհատական օգտահաշվի օգտատերը և այն շահագործող անձնակազմը:

53. Գնահատման համակարգում տվյալների պահպանման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Արխիվային գործի մասին» օրենքով և այլ իրավական ակտերով:

54. Գնահատման համակարգում ինքնաշխատ եղանակով կատարվում են հետևյալ գործողությունները՝

1) ձևավորվում է դիմողի ընտանիքի Սոցիալական գործը: Սոցիալական գործում ներառվում են ընտանիքին և ընտանիքի յուրաքանչյուր անդամին վերաբերող տվյալները՝ համաձայն սույն հավելվածի N 3 ձևի.

2) ձևավորվում են անապահովության նպաստ, եռամսյա հրատապ օգնություն, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն նշանակելու կամ մերժելու կամ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ նպաստի չափի փոփոխման էլեկտրոնային կարգադրությունները՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով՝ առանց ստորագրության.

3) հարակից շտեմարաններից ստացվում և կիրառվում են տվյալ ընտանիքին վերաբերող անապահովության հիմքով սոցիալական աջակցության տրամադրումը բացառող գործոնները.

4) սույն հավելվածի Ձև N 5-ի համաձայն՝ տնայցի ընթացքում ներառված տվյալների հիման վրա որոշվում է ընտանիքի կեցության պայմանների միավորը.

5) ապահովում է Գնահատման համակարգի ծրագրային անվտանգությունը (տվյալների կորուստ, հաքերային հարձակումներ, ֆիզիկական ոչնչացում և բացառիկ այլ դեպքեր).

6) կազմվում են սույն կետի 2-րդ ենթակետում նշված նպաստների վճարման ցուցակները և ձևավորվում են ֆինանսական ամսական հայտերը.

7) իրականացվում է վճարման ցուցակների տրամադրումը վճարող կազմակերպություններին՝ «ՀայՓոստ» ՓԲԸ և Ծառայության հետ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքած առևտրային բանկեր.

8) իրականացվում է Գնահատման համակարգ վճարման ռեեստրների ներառումը.

9) իրականացվում է օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով սոցիալական աջակցության ծրագրում ներառվող ընտանիքների ցուցակների ձևավորումը և համապատասխան սոցիալական ծառայությունը տրամադրող կազմակերպությանը փոխանցումը.

10) անհրաժեշտ հաշվետվությունների ձևավորումը:

55. Գնահատման համակարգում Դիմողը՝

1) սոցիալական պաշտպանության համակարգի դիմումների միասնական համակարգում ստեղծում է անհատական օգտահաշիվ, որից օգտվում է 'Դիմողը' հանդիսանալով օգտահաշվի տնօրինողը: Յուրաքանչյուր անձ համակարգում կարող է ստեղծել իր անհատական օգտահաշիվը, որը պատկանում է միայն իրեն:

2) անհատական օգտահաշվից անցում է կատարում սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական համակարգի այլ բաժիններ՝ համապատասխան դիմում ներկայացնելու համար:

3) ծանոթանում է իր դիմումի ընթացքին և կարգավիճակին, ընդունված որոշումներին, սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ տեղեկություններին:

4) վերադասության կարգով բողոքարկում է Գնահատման համակարգում ընդունված որոշումները:

5) ծանոթանում է իրեն հասանելիք սոցիալական ծառայությունների փաթեթներին:

56. Վերադասության կարգով բողոքները քննող՝ Ծառայության համապատասխան ստորաբաժանման պատասխանատու աշխատողը Գնահատման համակարգում դիտում է բողոքարկման դիմումը, սոցիալական գործում առկա տվյալները, ուսումնասիրման արդյունքում առաջարկություն է ներկայացնում ստորաբաժանման ղեկավարին՝

1) բավարարել բողոքը և ձևավորել նոր Կարգադրություն կամ

2) մերժել բողոքը՝ Կարգադրությունը թողնելով անփոփոխ:

57. Մասնագետն անհատական օգտահաշվով ստացված՝

1) ներբեռնված փաստաթղթերում առկա տվյալները համեմատում է մուտքագրված տվյալների հետ, դրանց անհամապատասխանության դեպքում կատարում հարցում 'Դիմողին' ուղղելու նպատակով:

2) դիմումը հաստատում կամ մերժում է՝ ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

58. Գնահատող մասնագետը՝

1) Գնահատման համակարգով իր աշխատանքային էջում ստանում է տնայց կատարելու հանձնարարություն, որի կատարման ժամկետը սահմանվում է ինքնաշխատ, դիմելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրերի ընթացքում:

2) տնայցի ընթացքում դյուրակիր համակարգչային տեխնիկայի միջոցով Գնահատման համակարգ է ներբեռնում՝

ա. սույն հավելվածի N5 ձևի հարցաշարի պատասխանները.

բ. դիմող ընտանիքի բնակության վայրը՝ հարցաշարով նախատեսված դեպքերում լուսանկարում և դրանք ներբեռնում է Գնահատման համակարգ:

59. Գնահատման համակարգի միջոցով իրականացվող անապահովության հիմքով սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկվում են տվյալ ծրագրի համար սահմանված տվյալներ ունեցող և Գնահատման համակարգով սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքները:

60. Գնահատման համակարգի տվյալների հիման վրա իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում չեն ընդգրկվում ապահով ճանաչված կամ նախորդած 12 ամսվա ընթացքում դիմում, այդ թվում՝ համաձայնություն, չներկայացրած ընտանիքները:

Լրացնում է դիմողը

Միասնական սոցիալական ծառայության
_____ տարածքային կենտրոնին
Հայաստանի Հանրապետության, _____
հասցե
Դիմող _____ -ից
Անուն, ազգանուն, հայրանուն

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ իրականացնել իմ _____ (ընտանիքիս) անապահովության գնահատում՝ անապահով ճանաչելու և անապահովության հիմքով սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով: Կից ներկայացնում եմ իմ և ընտանիքիս չափահաս անդամների համաձայնության հավաստիացումները: Մենք՝ ներքոստորագրյալներս, համաձայն ենք սույն դիմումի բովանդակությանը և ընդունում ենք դիմումում ստորև ներկայացված պարտավորությունները՝

1. համաձայն ենք, որ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ստուգվեն մեր ընտանեկան, այդ թվում՝ ամուսնական կապերը, ընտանիքիս անդամների առողջական վիճակի, ներառյալ՝ բժշկական գաղտնիք պարունակող, եկամուտների (աշխատավարձերի, դրանց հավասարեցված այլ վճարումների, եկամտային հարկի տարեկան հաշվարկներում (հայտարարագրերում) հայտարարագրած եկամուտների), վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը, սպառած խմելու ջրի քանակը՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունում առկա տվյալներով, սպառած էլեկտրաէներգիայի քանակը՝ «Հայկական էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունում առկա տվյալներով, սպառած բնական գազի քանակը՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունում առկա տվյալներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ տվյալներ:

2. երաշխավորում ենք, որ ընտանիքի անապահովության գնահատման ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի (այսուհետ՝ տարածքային կենտրոնի) աշխատողը և օրենսդրությամբ նման իրավասություն

ունեցող այլ անձինք իմ ընտանիքի կազմի և պայմանների ուսումնասիրման նպատակով, կարող են առանց խոչընդոտների կատարել տնայց.

3. տեղեկացված ենք, որ առաջին տնայցը կատարվելու է դիմումի հաստատումից 15 աշխատանքային օրվա ընթացքում, և պարտավորվում ենք համագործակցել տնայց իրականացնողի հետ՝ անհրաժեշտ տվյալների լիարժեք հավաքագրման նպատակով.

4. համաձայն ենք, որ տնայցի ընթացքում տարածքային կենտրոնի աշխատողը լուսանկարի իմ կամ ընտանիքիս կեցության պայմանների առանձին հատվածներ (առանց լուսանկարելու անձանց դեմքերը), և տեղեկացված ենք, որ արված լուսանկարները կիրառվելու են միայն ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում, ինչպես նաև պահվելու և մշակվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով.

5. տեղեկացված ենք, որ անապահովության նպաստը (այսուհետ՝ նպաստ) և անապահովության հիմքով սոցիալական աջակցության այլ տեսակները նշանակվում են մինչև օրենսդրությամբ դադարեցման հիմքերն առաջանալը.

6. տեղեկացված ենք, որ նպաստ կամ անապահովության հիմքով սոցիալական աջակցության այլ տեսակներ նշանակվում են ընտանիքում չափահաս աշխատունակ, բայց չգբաղված անդամների համար՝ զբաղվածության ակտիվացման ծրագրերում ներառվելու նախապայմանով, որի կապակցությամբ պարտավորվում ենք 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանք փնտրող անձի կողմից հաշվառվելու համար առցանց դիմում (ընտանիքի անապահովության գնահատման կարգը և պայմանները հաստատող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված են բացառությունները).

7. տեղեկացված ենք, որ ընտանիքի մասին ոչ հավաստի կամ կեղծ տվյալներ ներկայացնելու կամ տվյալները թաքցնելու հետևանքով ավելի վճարված գումարն օրենսդրությամբ սահմանված կարգով հետ է գանձվելու.

8. պարտավորվում ենք ընտանիքիս չափահաս անձանց թվի ավելացման (ներառյալ երեխայի չափահաս դառնալու հիմքով) կամ ընտանիքի բնակության վայրի փոփոխության մասին 15 օրվա ընթացքում կատարել համապատասխան փոփոխություններ այս դիմումում, ինչպես նաև

տեղյակ եմ, որ նշված հիմքերի առաջացման դեպքում ընտանիքիս անապահովության գնահատումը դադարեցվում է և ընտանիքի անապահովության գնահատման համար պետք է ներկայացնեմ նոր դիմում:

9. պարտավորվում եմք ընտանիքի անապահովության գնահատման համար անհրաժեշտ ցանկացած տեղեկության փոփոխության դեպքում դրա մասին մինչև յուրաքանչյուր ամսվա վերջին օրվան նախօրոհ օրը ներառյալ կատարել համապատասխան փոփոխություններ անհատական օգտահաշվում, իսկ սահմանված ժամկետում չտեղեկացնելու դեպքում՝ տեղյակ եմք, որ ընտանիքի անապահովության գնահատումը դադարեցվում է և ավելի վճարված գումարն օրենսդրությամբ սահմանված կարգով հետ է գանձվելու:

10. տեղյակ եմք, որ անապահովության նպաստ կամ եռամսյա հրատապ օգնության ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե ընտանիքիս անդամը դուրս է մնացել պարտադիր կրթությունից կամ ընտանիքի որևէ անդամի կողմից գրավադրվել է անշարժ գույք:

11. համաձայն եմք, որ այս դիմումում նշված անձանց նույնականացման տվյալները փոխանցվեն սոցիալական ծառայություններ տրամադրող այն կազմակերպություններին, որոնք պետք է աշխատեն իմ կամ ընտանիքիս անդամների հետ, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված սոցիալական աջակցության ծրագրեր (դրամական և ոչ դրամական աջակցություն, արտոնություններ, զեղչեր և այլն) իրականացնող պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, նախարարության հետ կնքված համագործակցության հուշագրերի (պայմանագրերի) հիման վրա՝ այլ կազմակերպությունների:

